ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ Ի.ՄԻԼԻՏՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

25 մայիսի 2026 թվական

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրն միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու Ի. Միլիտոսյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի և «Միքայել Անտոնյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև «18» մայիսի 2026 թվականին կնքված «ԳԻՄԾՄԴ-ՄԱԱՊՁԲ-26» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

«Միքայել Անտոնյան» Ա/Ձ-ն հրաժարվում է մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու Ի. Միլիտոսյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի պատվիրատուի ղեկավարը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Միքայել Անտոնյան» Ա/Ձ-ի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու Ի. Միլիտոսյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի պատվիրատուի ղեկավար՝ Ի.Միլիտոսյան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ Ի. ՄԻԼԻՏՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՊՈԱԿ
ГЮМРИЙСКАЯ ДЕТСКО-ЮНОШЕСКАЯ СПОРТИВНАЯ ШКОЛА ПО ТЯЖЕЛОЙ АТЛЕТИКЕ ИМЕНИ М. МИЛИТОСЯНА
MILITOSYAN GYUMRI YOUTH SPORTS SCHOOL OF WEIGHTLIFTING AGENCY, ISRAEL
05527595